

ՄԱՏԵՆԱԻԾՈՍԱԿԱՆ

ԽՕԶԱ. ՊԵՏՐՈՍ

ՀԱՅ ԱԶԳԻ ՎԱՃԱՐԱՎԱՐԻ ԴԻՄԱՆԱԳԻՇՔ:

ԿԱԼԿԱԹԱՑՈՒՄ 1756 — 1763

Յիրաւի արժէ կանգ առնել փնտուել
ու պրատել, գանել ու երևան հանել մեր
կրն Հնդկահայ երեսի նախնեաց կատա-
րած բազմաթիւ ու բազմավիսի զործերը,
թէ անգլիական տիրապետութիւնից առաջ
և թէ յետոյ :

Այս լուրջ և ոչ թեթև աշխատանքը
յօժար կամքով, ո՞չ, պիտի ասեմ սրտով,
իր ուսերի վրայ է վերցրել Մեսրովը Սէթ-
եանցը : Առանձին ուշադրութեան արժանի
է նրա հրատարակած վերջին անգլերէն
աշխատութիւնը, որի մէջ նա այնքան
վարպետորէն ու հարազատ կերպով նկա-
տում է եօջա Պետրոս ընտիր վաճառակա-
նի զէմքը, հիմնուած է զանազան հին,
թերես շատերի համար անարժէք, փաս-
տաթղթերի ու վկայութիւնների վրայ, և
որը, հեղինակլ կարգացել է Հնդկաստա-
նի Պատմական Արձանագրութեանց Յանձ-
նաժողովում » 1928 ի Դեկտեմբերին :

Գրքի առաջարանում խօսելով հան-
րածանօթ Գորգին խանի մասին եղրա-
փակում է, թէ նախնի Հնդկահայոց մէջ
ի բաց առեալ արժանաւոր քաղաքացի-
ներ, մեծահռչակ վաճառականներ լինե-
լուց՝ եղել են նաև համբաւաւոր զիւանա-
գէտներ և զինուորական հմուտ հրամանա-
տարներ : Ապա՝ առաջ է ընթանում յիշե-
լու երկու այն Հայերի մասին, որոնք այն-
քան արժանաւոր զործ ու թանկազին ծա-
ռայութիւններ մատուցին Բէնզալում ա-
ռաջին հաստատողներին — չ'ասենք Ան-
գլիոնկան կառավարութեան : Աւշ չէ փա-
կագծում յիշել, թէ Տեղիս Հայոց եկեղե-
ցու բակում Սէթեանցին յաջողուում է մի
հայ տիկնոջ տապանաքար գանել, որով
ապացուցում է, թէ Հայերը շատ աւելի
կանուխ են հաստատուած եղել, քան 1690
թուականներին անգլիացիների ժամանու-
մը . . . :

Քիչ յետոյ անգլիացիներն իմանում
են Հայերի դիւանագիտական ընդունակու-
թիւնները : Եւ եսջա Սարհատն է լինում,

որ իր եռանգուն ջանքերի և Մօզուլ վե-
հապետների մօտ ունեցած «իրենց» առան-
ձին յարգանքի չնորհիւ յաջողուում է ան-
գլիացիների համար Հնդկաստանում 1715ին
հաստատուելու իրաւունքը գտնել :

Ապա պատմութիւնն առաջ տանելով
մեղ կանգնեցնում է Հնդկաստանի պատ-
մութեան այն տիսուր էջի առաջ, երբ Ան-
գլիացիները սախուում են թողնել — լքիւ
քաղաքն ու ապաստան սրոնել ֆուլտա-
յում գտնուող իրենց նաւերի մէջ : Սա
միշտ այն ժամանակն էր երբ տեղի է ու-
նենում «Աև Զնդանի» (Black Hole) արդէն
ծանօթ անախորժ պատմութիւնը . . . :

Ահա՝ այս կրիտիկական բողէին օգ-
նութեան է հասնում հայազգի եօջա Պետ-
րոսը, որը վեց տար շարունակ ուտեսա-
կացար է ուղարկում ֆուլտայում գտնը-
ող Անգլիացիներին մինչեւ հրամանատար
Քլայքի հասնելը :

Վերջինս վարձում է նրան իբրև պատ-
մաւոր և թարգմանիչ առ Միր Զաֆֆեր,
Սէրաջու-Դովլային, «Աև Զնդանի» տիսուր
պատմութեան հեղինակին, գետին տապա-
ւելու : Եւ երբ հերթն հասնում է առաջի-
նի որդուն Միր Քեասիմին իշխան զառնա-
րու՝ վիրատին եօջա Պետրոսն է, որ մեր
Քեասիմի հետ ունեցած իր անձնական մը-
տերութեան շնորհիւ, կարողանում է զը-
նահատելի ծառայութիւններ մատուցանել
անգլիացիներին : Աւ չկայ մի հատիկ յի-
շատակարան անգամ, թէ արգեօք նա վար-
ձատրուեց անգլիացիների կողմից, իբրև
մի հաւատարիմ եւ անձնուէր զեսպան .
ո՞չ և ո՞չ . աւազ նա երեսի վրայ ձգուած
մեոց եւ զատապարտուեց, անշուշտ ան-
տեղի, իբր մի լրտես . . . : Ահա այսպէս
նա վարձատրուեց իր արած ծառայու-
թիւնների ու կրած նեղութիւնների հա-
մար . . . «Մհ բարքեր, ո՞հ ժամանակներ» :

. . . Աւ 1759 ի Յունուարի 25 ին՝ Լռն-
դոնի վարչութեան ուղղած իր նամակով
թուում է իր արած մարգավայել զործերն
ու գանգատուում իր հասցէին ուղղած տն-
տեղի ու նողկալի զրագարտութիւնների
դէմ : Զրումէ այդ բոլոր այլանգակ ըս-
տորնութիւնները և ինչըրում է մի պաշ-
տօն և փոխարինութիւն իր ծախսած զու-
մարների համար :

Յիշատակարան չկայ հատ մի իմանա-

լու, թէ ի՞նչ պատասխան ստոցուց լոնդոնից, բայց թւում է, թէ այդպիսի մի թանկագին փաստաթուղթ նամակ չէր կարող միանգամից անուշաղիր թողնել: . . . Եւ հմուտ հեղինակն առաջ է զնում փաստացի տուեալներով ու տարբեր ժամանակներում երեան ելած հրատարակութիւններով հաստատել ու միանգամ ընդմիշտ մի պայծառ լոյս սփռել Խօջա Պետրոս մարդու մաքուր նկարագրի վրայ, ցոյց տալով նրան իբրև ճշմարիտ, հաւատարիմ, աղնի հոգի, որը մինչև անգամ իր կեանքը վատանգի ենթարկելով օգնեց անդիւացիներին նրանց կարիքի ժամանակ . . . : Կալկարա ԱՐՑԱՇԵՍ Թ. Ա.Ա.ՀՎԵՐԴԵԱՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻ. ԳԵԼԵՑ ԲԱՐՁԵՑ ԵԱԿԱ. ԵԿԵՂԵՑԻ. Աւառնախորութիւններ. Հայ. Եկեղեցւոյ Բարեկազորքան վերաբերա Խնիշիներ. — Հայ. Եկեղեցւոյ զիրք, Քիշոս. Ընդհ. Եկեղեցւոյ մէջ: — Առաջնականութիւն Հայ. Եկեղեցւոյ: — Պետրին և Եկեղեցի: Տպդր. Երևանկէմ, 1930. 8 էջ Ժ + 355:

Ս. Աթոռիս Տպարանէն նոր լոյս տեսաւ այս յոյժ կարեւոր զիրքը, որ Միոն Ամսագրին 1927-1930 տարուան չորս շաբք խըմբագրականներուն արտատպութիւննէ, Միոնի ողջադատ ընթերցողներէն ունանց փափաքին համաձայն գրքոյի վերածուած, ուրպէսզի կարելի ըլլայ աչքի առջն ունենալ ուսումնասիրութեանց այդ շաբքը իրենց անընդհատ ամրողջութեանը մէջ, ի հարկին անդրագառնալու համար ատոնց վրայ», ինչ որ հեղինակին ալ փափաքն է եղած:

Բնովանդակութիւնը ինքնին կը խօսի անոր արժէքին մասին. —

Ա. Հայաստանայց Եկեղեցւոյ Բարեկարգութեան Վերաբերեալ Խնիշիներ. — Ա., Բ., Գ., և Դ. (Բասերու առհմանում, պատմական տեղեկութիւններ, ևայլն). — 1. Եկեղեցւոյն չէնքը. — 2. Եկեղեցւոյ ժողովուրդը. — 3. Եկեղեցւոյ դաւանանքն ու պաշտամունքը. — 4. Եկեղեցւոյ պաշտօնէութիւնը. — Ա. Կոչում. — Բ. Նկարագիր. — Գ. Ուսում. — Դ. Կենցաղ. — Ե. Ապրուստ. — Եղբակացութիւն. — Հայ Եկեղեցւոյ արզի վիճակը [Յաւելուած]:

Բ. Հայաստանայց Եկեղեցւոյ դիրքը Քրիստոնէան ընդհանուր Եկեղեցւոյ մէջ:

Գ. Առաջնականութիւն Հայաստանայց Եկեղեցւոյ. — Ա. Էռուսւորչէն յառաջ Քրիստոնէութիւն կայ Հայաստանի մէջ. — Բ. Տերառովիանոսի ակնարկածը Միծ Հայքն է. — Գ. Անատարուկ Հայոց Թագաւոր. — Դ. Աւանդութիւնն է Պետրոս Առաքեալի Հոռմի մէջ Եկեղեցի հիմնելը:

Գ. Պետրիսին և Եկեղեցի. — Ա. — [Առհմանումը բառերու և ասացուածներու]. — Բ. [Եկեղեցւոյ պետականացման ծագումը և Պետութեան ու Եկեղեցւոյ բաժանմոն խնդիրը Հոռմի Եկեղեցւոյն մէջ]. — Գ. [Պետութեան և Եկեղեցւոյ բաժանումը Ֆըռուանայի մէջ]. — Դ. [Հայաստանի Հայոց Եկեղեցւոյ գիրքը հանդէպ իր վրայ տիրող կառավարութիւններու]. — Ե. [Հայոց Կաթողիկոսներուն կրկին պաշտօնները]. — Զ. [Կաթողիկոսներու և Պատրիարքներու իրապէս քաղաքական գործունէութիւնը]. — Է. [Թիւրքիոյ Հայոց Պատրիարքութիւնը և Ազգային Սահմանադրութիւն]. — Ը. [Պօլոժէնիէ կամ Բարձրագոյն Կարգագրութիւն]. — Թ. [Խորհրդային կարգեր. — Եկեղեցին Անդիւոյ մէջ և Եկեղեցին Ամերիկայի մէջ]:

Գիրաշնորհ Հեղինակին լուսանկարը կայ ի մուտս զիրքին: Աւառնախորութեան համար առաջազրուած նիւթերը իրենց զիմանակ ստորաբաժանումներով քըննուած, լուսաբանուած, գասաւորուած ու եղբակացութեան մը բերուած են: Եւ այդ մանրակրկիտ և խզճամիտ ուսումնասիրութիւններուն մէջ աւանդութիւնն ու պատմութիւնը, ներհայցեցութիւնը ու արամարանութիւնը ընձեռած են իրենց տրամմիջոցները: Միայն մէկ բան կը պակսի՝ Արագածնի կամքէն անկախ պատճառներով՝ Կիրարկութիւնը:

Հայաստաննեաց Եկեղեցւոյ պատմութիւնով, արդի կացութեամբ և մանաւանդ անոր բարեկարգութեամբ հետաքրքրուող ու նախանձախնդիր ունետ անձի ոչ թէ «սեղանի զարդ»ը պէտք է կազմէ՝ այ անոր ձեռքին մէջ պէտք է որ «բաց զիրք» մը ըլլայ Հայ Եկեղեցին՝ որ հայ արդի Եկեղեցականութեան բարձրաստիճան և ձեռնհաս դէմքերէն մէկուն կողմէ հանրութեան կը հրացանուի՝ մասնագիտօրէն պատրաստուած, խնամքով տպագրուած և զիւրամատչելի զինով:

ՇԱՀԱՐԾ ՎԱՐԴԱՊԵՏ